



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 849-ԱԿԲ

« 20 » 07 2011

<<ԶԱՆԳԱԿ 97>> ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԴՊՐՈՑԻ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ <<ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ>> , 5 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ
<< ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ >> ԴԱՍԱԳՐՔԵՐԸ և ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով << Կրթության մասին >> ՀՀ օրենքի հոդված 37-ի կետ 3-ը,
<< Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի հոդված 17-ի մաս 6-ը, հոդված 30-ի կետ 20-ը,
2011-2012 ուստարվա դասագրքերի մրցույթի գնահատման ընդհանուր հանձնաժողովի որոշումը,
Կրթության ազգային ինստիտուտի մասնագիտական կարծիքները՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1.<< Զանգակ 97 >> հրատարակչության կողմից ներկայացված հանրակրթական դպրոցի
<< Երկրաչափություն 7 >> (հեղ.՝ Լ.Աթանեսյան, Վ.Բուտուզով, Ս.Կադոմցև, Է. Պոզդնյակ, Ի
Յուդինա), <<Երաժշտություն 5 >> (հեղ.՝ Յու. Յուզբաշյան, Ա.Փահլևանյան),դասագրքերը և
<< Երկրաչափություն 7-9 >> (հեղ. Ս. Հակոբյան), <<Երաժշտություն 5-7 >> (հեղ.՝ Յու.
Յուզբաշյան, Ա. Փահլևանյան, Վ. Ավետիսյան) ուսուցչի ձեռնարկները երաշխավորել
գործածության:

2.Դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների տպագրությունն իրականացնել Դասագրքերի
շրջանառու հիմնադրամի և հրատարակչությունների միջև կնքվող պայմանագրերի հիման
վրա:

3.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ա. ԱՇՈՏՅԱՆ